

Լրացուցիչ տեղեկություններ պարունակող ծանուցում Ձեր իրավունքները և երկարատև խնամքի նպաստները՝ մասնագիտացված խնամքի հաստատության

«California Advancing and Innovating Medi-Cal» (CalAIM) ծրագիրը Ձեր LTC ապահովագրությունն ամբողջ նահանգում մտցնում է (ներառում է) «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի մեջ: Դա նշանակում է, որ Դուք պետության կողմից արտոնված Ձեր LTC ծառայությունները ոչ թե Fee-For-Service (FFS) «Medi-Cal»-ի, այլ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի միջոցով եք ստանալու: «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կհամակարգի Ձեզ անհրաժեշտ խնամքը հաստատություններում և տան ու համայնքի միջավայրում: Դա ներառում է LTC ծառայությունները, որոնք տրամադրվում են հետևյալ վայրերում.

- Intermediate Care Facility-ներ՝ Developmentally Disabled (ICF-DD) անձանց համար
- ICF/DD-Habilitative
- ICF/DD-Nursing
- Մասնագիտացված խնամքի հաստատություններ
- Ենթասուր խնամքի հաստատություններ
- Մանկական ենթասուր խնամքի հաստատություններ

2024 թ. հունվարի 1-ից **բոլոր** շրջաններում «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերն են տրամադրելու LTC նպաստը՝ վերը նշված հաստատություններում:

Ընդհանուր տեղեկություններ

1. Ի՞նչ փոփոխություն են կրելու «Medi-Cal»-ի իմ ծառայությունները:

Քանի որ Դուք ապրում եք Մասնագիտացված խնամքի հաստատությունում, շուտով Ձեզ անհրաժեշտ կլինի անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:

«Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը Ձեր շրջանում կկազմակերպի և կվճարի «Medi-Cal»-ի Ձեր ստացած ծառայությունների համար: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի կողմից տրամադրվող նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

Երբ Դուք անդամագրվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, Շրջանային կենտրոնի կողմից Ձեզ տրամադրվող ծառայությունները և առողջության այլ կարգի ապահովագրությունը, օրինակ՝ «Medicare»-ը կամ մասնավոր ապահովագրությունը **չեն** փոխվի:

2. Ես «Medi-Cal»-ում ընդգրկված կմնա՞մ:

Այո: «Medi-Cal»-ի Ձեր իրավունակությունը և ապահովագրական ծածկույթի մեջ մտնող ծառայությունները **չեն** փոխվի:

3. Ի՞նչ կկատարվի, եթե ես Share of Cost (SOC) ունեմ և ապրում եմ Մասնագիտացված խնամքի հաստատությունում:

«Medi-Cal»-ի Ձեր Share of Cost-ը (SOC) **չի** փոխվի: SOC-ի դեպքում՝ Դուք ինքներդ եք վճարում Ձեր ստացած որոշ բուժօգնության համար և աջակցություն եք ստանում «Medi-Cal»-ի կողմից: Եթե Դուք SOC ունեք և ապրում եք Մասնագիտացված խնամքի հաստատությունում, Դուք **պետք է** անդամագրվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:

4. Եթե ես երկրորդական ապահովագրություն ունեմ, որը կոչվում է նաև առողջության այլ ապահովագրություն (OHC), օրինակ՝ մասնավոր ապահովագրություն, այն դեռ կկարողանա՞ հաշիվ ներկայացնել «Medi-Cal»-ին:

Այո: Մեծ մասամբ «Medi-Cal»-ը կվճարի որոշ ծախսերի համար, որոնց համար Ձեր մյուս ապահովագրությունը չի վճարում: Դրանց թվում են «համախմբված վճարումները» և «համավճարումները»: «Medi-Cal»-ը վերջին վճարողն է: Դա նշանակում է, որ այն վճարում է վերջում կամ այլ ապահովագրական ընկերություններից հետո:

Պարտադիր **չէ**, որ «Medi-Cal»-ի Fee-For-Service (FFS) սպասարկողները կամ «Medicare»-ի սպասարկողներն ընդգրկված լինեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրում, որպեսզի կարողանան հաշիվ ներկայացնել ծրագրին:

5. Ես ստիպված կլինեմ տեղափոխվել իմ Մասնագիտացված խնամքի հաստատությունից:

Ոչ: Եթե Դուք ապրում եք Ենթասուր խնամքի հաստատությունում, ապա Ոչ: Եթե Դուք ապրում եք ICF/DD, ICF/DD-H կամ ICF/DD-N հաստատությունում, ապա «չընդհատվող խնամքի (continuity of care)» կարգավիճակով՝ Դուք կարող եք առնվազն 12 ամիս մնալ նույն հաստատությունում՝ սկսած այն օրվանից, երբ անդամագրվեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին: Քանի դեռ Ձեր ստացած ծառայությունները բժշկական առումով անհրաժեշտ են, Դուք կարիք **չունեք** «չընդհատվող խնամք» խնդրելու, որպեսզի մնաք Ձեր ICF/DD, ICF/DD-H կամ ICF/DD-N հաստատությունում: 12 ամիս անց Դուք կարող եք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին խնդրել, որ ևս 12 ամիս մնաք Ձեր ICF/DD, ICF/DD-H կամ ICF/DD-N հաստատությունում:

«Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո Դուք կարող եք շարունակել ստանալ Ձեզ անհրաժեշտ բժշկական ծառայությունները և հնարավոր է, որ կարողանաք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո մինչև **12 ամիս** պահպանել «Medi-Cal»-ի Ձեր սպասարկողին:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կկապվի Ձեզ հետ: Նրանք կաշխատեն Ձեզ, Ձեր Մասնագիտացված խնամքի հաստատության, Շրջանային կենտրոնի և Ձեր խնամողների հետ: Նրանք կքննարկեն այն հարցը, թե ինչ տեսակի խնամք է Ձեզ հարկավոր, և ինչպես եք շարունակելու ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը:

6. Ո՞րն է տարբերությունը Fee-For-Service (FFS) (սովորական) «Medi-Cal»-ի և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջև:

Եթե Դուք Fee-For-Service (FFS) «Medi-Cal» ունեք, որը կոչվում է նաև «Սովորական» «Medi-Cal», ապա կարող եք այցելել «Medi-Cal»-ի ցանկացած սպասարկողի, որն ընդունում է FFS: Բայց «Medi-Cal»-ի Ձեր նպաստները և Ձեր սպասարկողները սովորաբար չեն համակարգվում: «Medi-Cal Managed Care»-ի դեպքում Ձեր առողջապահական ծրագիրը **համակարգում է** «Medi-Cal»-ի Ձեր նպաստները և «Medi-Cal»-ի սպասարկողների ցանց ունի իր տրամադրության տակ:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը Ձեր սպասարկման տարածքում աշխատում է բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական սպասարկողների հետ՝ առողջապահական ծառայություններ կազմակերպելով Ձեզ համար: Այն տրամադրում են «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող՝ բժշկական առումով անհրաժեշտ այն ծառայությունները, որոնց կարիքը Դուք ունեք: Այն նաև Ձեր և Ձեր սպասարկողի հետ միասին համակարգում և կառավարում է Ձեր բուժսպասարկումը:

Երբ Դուք «Medi-Cal»-ի ծրագրում լինեք, Դուք կարող եք շարունակել «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի փոխարեն՝ որոշ առողջապահական ծառայություններ ստանալ FFS «Medi-Cal»-ի միջոցով: Շրջանների մեծ մասում դրանք ներառում են երկարատև խնամքի ծառայություններն ու աջակցությունը, դեղատնային ծառայությունների մեծ մասը, ալկոհոլի կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների (substance use disorder) (SUD) բուժման ծառայությունները, հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները և ատամնաբուժական ծառայությունները: Եթե դուք In-Home Supportive Services (IHSS) եք ստանում, Դուք կշարունակեք այդ ծառայությունները ստանալ FFS «Medi-Cal»-ի միջոցով՝ այնպես, ինչպես հիմա եք ստանում:

Տեղեկություններ «Medicare» ունեցող անդամների համար

7. Ես «Medicare» ունեմ: Եթե ես անդամագրվեմ «Medi-Cal»-ի որևէ ծրագրի, կպահպանեմ իմ «Medicare»-ը:

Այո: Եթե Դուք «Medicare» ունեք, կպահպանեք «Medicare»-ի Ձեր նույն նպաստներն ու սպասարկողներին: «Medicare»-ի Ձեր նպաստները և սպասարկողները **չեն** փոխվի, երբ Դուք ընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում:

«Medicare»-ի Ձեր սպասարկողները՝

- Պարտադիր չէ, որ ընդգրկված լինեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցում, որպեսզի շարունակեն սպասարկել Ձեզ.
- Չեն կարող Ձեզնից համավճարումներ, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումներ պահանջել, եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք.
- Համավճարումների, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումների համար պետք է հաշիվ ուղարկեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին, եթե անգամ նրանք «Medi-Cal»-ի ցանցում ընդգրկված չեն:

«Medicare Advantage»-ի Ձեր նպաստների վերաբերյալ հարցերով զանգեք Ձեր «Medicare Advantage» ծրագրի անդամակցության քարտի վրա նշված համարով:

8. Ի՞նչ է «Medicare Advantage»-ի (MA) ծրագիրը:

Ոմանք իրավունակ են ինչպես «Medicare»-ի, այնպես էլ «Medi-Cal»-ի համար և «կրկնակի իրավունակ» կամ «Medi-Medi» նպաստառուներ են: Ինչպես «Medicare»-ի բոլոր նպաստառուները՝ կրկնակի իրավունակ նպաստառուները կարող են իրենց ընտրությամբ՝ խնամք ստանալ բուն «Medicare»-ի միջոցով կամ անդամագրվել MA-ի որևէ ծրագրի, որոնք երբեմն կոչվում են «Part C» կամ «MA-ի ծրագրեր»: California-ում MA-ի մի քանի տիպի ծրագրեր են գործում և ծրագրերի ընտրության տարբերակները տարբեր շրջաններում տարբեր են:

9. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես անդամագրված եմ «Medicare Advantage»-ի (MA) որևէ ծրագրի և ապրում եմ Alameda, Contra Costa, Fresno, Kings, Kern, Los Angeles, Madera, Orange, Riverside, Sacramento, San Bernardino, San Diego, San Francisco, San Mateo, Santa Clara, Stanislaus կամ Tulare County:

Եթե Դուք ընդգրկված եք MA-ի որևէ ծրագրում, և Ձեր շրջանում դրան **համընկնող** «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր կա, Դուք ավտոմատ կերպով կընդգրկվեք «Medi-Cal»-ի այդ համընկնող առողջապահական ծրագրում:

Վերևում նշված 17 շրջաններում նահանգը «Medi-Cal»-ի «Matching Plan Policy» է կիրառում: Դա նշանակում է, որ եթե Դուք անդամագրվում եք MA-ի որևէ ծրագրի, և կա «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր, որը համապատասխանում է MA-ի այդ ծրագրին, Դուք պետք է «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագիրն ընտրեք: Այս կանոնը **չի** փոփոխում կամ ազդում MA-ի ծրագրի Ձեր ընտրության վրա:

Երբ նույն ծրագիրը համակարգում է ինչպես Ձեր «Medicare»-ի, այնպես էլ «Medi-Cal»-ի նպաստները, համակարգումն ավելի հաջող է կատարվում: Որոշ շրջաններում այս ծրագրերն աշխատում են որպես մեկ ծրագիր: Դա կոչվում է «Medicare Medi-Cal»-ի (Medi-Medi) ծրագիր: Այդ ծրագիրն ավելի

լավ է համակարգում Ձեր «Medicare»-ի և «Medi-Cal»-ի ծառայությունները, ինչպես նաև «Medicare»-ի դեղատոմսային դեղերի ծրագիրը:

MA-ի Ձեր ծրագրի և «Medi-Cal»-ի ծրագրի անունները չպետք է նույնը լինեն կամ չպետք է համընկնեն: Դուք կարող եք ծանոթանալ Ձեր շրջանում «Medicare»-ի և «Medi-Cal»-ի համընկնող ծրագրերի ցուցակին՝ այցելելով **www.healthcareoptions.dhcs.ca.gov/medi-medi-charts**:

Եթե հարցեր ունեք «Medicare»-ում ընդգրկվելու Ձեր տրամադրության տակ եղած տարբերակների մասին, զանգահարեք «California Health Insurance Counseling & Advocacy Program» (HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով: (TTY՝ State Relay՝ 711):

Եթե հարցեր ունեք «Medicare Advantage»-ի նպաստների վերաբերյալ, զանգահարեք MA-ի Ձեր ծրագրի անդամության քարտի վրա նշված հեռախոսահամարով:

10. Ի՞նչ է «Medicare Medi-Cal»-ի ծրագիրը:

«Medicare Medi-Cal» ծրագիրը (Medi-Medi) MA-ի ծրագիր է այն անձանց համար, որոնք ունեն **և՛ «Medicare», և՛ «Medi-Cal»**: Այն կամավոր է: Այն Ձեր «Medicare»-ի և «Medi-Cal»-ի ապահովագրությունը միավորում է **մեկ** ծրագրում, որն ունի՝

- Համակարգված խնամք՝ մեկ թիմի կողմից:
- Նպաստների, բժիշկների, հիվանդանոցների, դեղատոմսային դեղերի, լաբորատոր ստուգումների, ռենտգենյան հետազոտությունների և որոշ բժշկական սարքավորումների մի միասնական խումբ: Ձեր նոր ծրագրում ընդգրկված կլինի Ձեր այժմյան բժիշկների մեծ մասը: Կամ այն Ձեզ կօգնի Ձեր պահանջները բավարարող նոր բժիշկ գտնել:
- Ապահովագրական մեկ ծրագիր՝ ծառայություններն, այդ թվում՝ բժշկական պարագաները, փոխադրումը և երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը համակարգելու համար:
- Սպասարկողների մեկ ցանց, որում ընդգրկված են բժիշկներ, հիվանդանոցներ, կլինիկաներ, լաբորատորիաներ և սարքավորումների մատակարարներ: Ձեր նոր ծրագրում ներառված կլինի Ձեր այժմյա բժիշկների մեծ մասը, կամ Ձեզ կօգնեն նոր բժիշկներ գտնել:
- «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող նպաստներից բացի՝ հնարավոր լրացուցիչ նպաստներ, օրինակ՝ ատամնաբուժական, լսողական կամ ակնաբուժական ապահովագրություն:

Հետևյալ **12 շրջաններում** «Medi-Medi» ծրագրեր են գործելու 2024 թվականին, Fresno, Kings, Los Angeles, Madera, Orange, Riverside, Sacramento, San Bernardino, San Diego, San Mateo, Santa Clara և Tulare:

Տեղեկություններ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի տարբերակների մասին

11. Ի՞նչ է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրն առողջապահական ծրագիր է, որը՝

- իր սպասարկման տարածքում աշխատում է բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական սպասարկողների հետ՝ առողջապահական ծառայություններ տրամադրելով Ձեզ.
- տրամադրում է Ձեզ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող՝ բժշկական առումով անհրաժեշտ այն ծառայությունները, որոնց կարիքը Դուք ունեք.
- Ձեր և Ձեր սպասարկողների հետ միասին համակարգում և կառավարում է Ձեր բուժսպասարկումը.

Երբ Դուք «Medi-Cal»-ի ծրագրում լինեք, Դուք կարող եք շարունակել «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի փոխարեն՝ որոշ ծառայություններ ստանալ FFS «Medi-Cal»-ի միջոցով: Մեծ մասամբ դրանք հետևյալներն են.

- որոշակի տնային և համայնքային ծառայություններ.
- «Medi-Cal»-ի դեղատնային ծառայությունների մեծ մասը.
- հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ.
- ակոհոլի կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների (SUD) բուժման ծառայություններ.
- ատամնաբուժական ծառայություններ:

Եթե Դուք «Medicare» ունեք, «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է նաև Ձեզ այնպիսի լրացուցիչ նպաստներ տրամադրել, որոնց համար «Medicare»-ը չի վճարում, և կարող է օգնել Ձեզ «Medicare»-ի այնպիսի ծառայություններ ստանալ, ինչպիսիք են՝

- փոխադրամիջոց՝ բժշկի այցելությունների ներկայանալու համար.
- երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ.
- բժշկական պարագաներ.
- համայնքային օժանդակություն:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի կողմից տրամադրվող նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

12. Ինչպե՞ս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրեմ:

«Medi-Cal»-ի Ձեզ հասանելի առողջապահական ծրագրերը երկու բանից են կախված՝

1. այն շրջանից, որտեղ Դուք ապրում եք և
2. այն բանից, թե արդյոք Դուք «Medicare Advantage»-ի որևէ ծրագրի անդամ եք:

Եթե Դուք այնպիսի մի շրջանում եք ապրում, որտեղ կարող եք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրել, և Դուք «Medicare Advantage»-ի որևէ ծրագրում ընդգրկված **չեք**, Դուք նույնքերին *«My Medi-Cal Choice»* փաթեթ կստանաք կամ ստացել եք: Դրանում նշված են «Medi-Cal»-ի Ձեզ հասանելի ծրագրերը:

Դուք կարող եք հեռախոսով անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Զանգահարեք «Medi-Cal Health Care Options» (Medi-Cal HCO)՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ անդամագրվեք առցանց՝ այցելելով

www.healthcareoptions.dhcs.ca.gov:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագիր չընտրեք և ընդգրկված **չլինեք** «Medicare Advantage»-ի որևէ ծրագրում, որին համապատասխանող «Medi-Cal»-ի ծրագիր գոյություն ունի, ապա «Medi-Cal»-ը, «Department of Health Care Services»-ը (DHCS) Ձեզ համար «Medi-Cal»-ի ծրագիր կընտրի:

Եթե Դուք «Medicare Advantage»-ի որևէ ծրագրի անդամ եք, 2024 թ. հունվարից որոշ շրջաններում «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կորոշվի «Medicare Advantage»-ի Ձեր ծրագրի համաձայն: Տես 9-րդ հարցը վերևում:

Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ փոխելու «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը: Զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ անցեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հղումով:

Եթե Դուք ապրում եք «Միակ ծրագրով» շրջանում կամ այնպիսի մի շրջանում, որը «County-Organized Health System» (COHS) ունի, Դուք կընդգրկվեք այդ COHS ծրագրում, «Միակ ծրագրում» կամ «Kaiser Permanente»-ում:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS, ոչ-COHS (Non-COHS) կամ «Միակ ծրագրով» շրջանում, այցելեք **<https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx>**:

13. Կարո՞ղ եմ ես անդամագրվել «Kaiser Permanente»-ին:

Դուք կարող եք «Kaiser Permanente»-ի անդամ դառնալ, եթե ապրում եք այն շրջաններից մեկում, որտեղ «Kaiser Permanente»-ը գործում է որպես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր:

Բացի այդ, Դուք պետք է բավարարեք ստորև բերված պահանջներից **մեկը**.

- Դուք «Kaiser Permanente»-ի անդամ եք եղել վերջին 12 ամսվա ընթացքում կամ

- Դուք «Kaiser Permanente»-ի ներկա անդամի հետ նույն տանը բնակվող՝ ընտանիքի անմիջական անդամ եք (ընտանեկան կապ), այդ թվում՝
 - նրա կինը/ամուսինը կամ կողակիցն եք,
 - նրա խնամքի տակ գտնվող մինչև 26 տարեկան երեխա եք,
 - նրա խորթ երեխան եք, որի 26 տարին չի լրացել,
 - նրա խնամքի տակ գտնվող 21 տարեկանը բոլորած հաշմանդամ եք,
 - մինչև 26 տարեկան նպաստառուի ծնողը կամ խորթ ծնողն եք կամ
 - մինչև 26 տարեկան նպաստառուի տատը/պապը, խնամակալը, հոգեծնողը կամ այլ ազգականն եք և ընտանեկան կապը ցույց տվող համապատասխան փաստաթուղթ ունեք կամ
- Դուք հոգեզավակ եք կամ
- ունեք և՛ «Medicare», և՛ «Medi-Cal» (կրկնակի իրավունակ եք)՝ ընդգրկված լինելով «Kaiser Permanente Senior Advantage»-ում (KPSA) կամ «Duals Special Needs Program»-ում (D-SNP):

«Kaiser Permanente»-ին անդամագրվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

14. Ի՞նչ է «Medi-Cal Health Care Options»-ը:

«Medi-Cal Health Care Options»-ը (Medi-Cal HCO) DHCS-ի ծառայություն է, որը ծրագրի անդամներին օգնում է տեղեկություններ ստանալ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի մասին: Այս ծառայության նպատակն է օգնել անդամներին, որպեսզի նրանք ճիշտ ընտրություններ կատարեն «Medi-Cal»-ի հարցում:

«Medi-Cal HCO»-ի կայքը գտնվում է **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

15. «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո ես կարո՞ղ եմ վերադառնալ Fee-For-Service (FFS) «Medi-Cal»:

Որոշ դեպքերում Դուք կարող եք վերադառնալ FFS «Medi-Cal»: Դա կախված է Ձեր բնակության վարչաշրջանից, ինչպես նաև որոշակի բացառություններին Ձեր համապատասխանելու հանգամանքից:

Եթե Դուք ապրում եք COHS կամ «Միակ ծրագիր» ունեցող շրջանում, չեք կարող FFS «Medi-Cal» վերադառնալ:

FFS «Medi-Cal»-ի մասին հարցերի դեպքում կամ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝

երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

16. Ո՞վ պարտավոր չէ անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:

Հնարավոր է, որ Դուք ստիպված չլինեք «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվել, եթե Դուք՝ ապրում եք ոչ-COHS կամ ոչ-«Միակ ծրագրով» շրջանում և Դուք՝

- American Indian/Alaska Native եք.
- այնպիսի մի նպաստառու եք, որը ծառայություններ է ստանում «Foster Care»-ով, «Adoption Assistance» Program-ով կամ գտնվում եք «Child Protective Services»-ի խնամքի տակ.
- California Veteran's-ի տանն եք ապրում.
- արդեն ունեք բժշկական պատճառով հաստատված ազատում «Medi-Cal»-ի ծրագրին անդամակցելու պահանջից. **կամ**
- բժշկական պատճառով ազատվում եք «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամակցելու պահանջից:

Եթե Դուք այնպիսի մի անդամ եք, որն օգնություն է ստանում հոգեզավակների խնամքի, «Adoption Assistance Program»-ի կամ «Child Protective Services»-ի միջոցով և ապրում եք «Միակ ծրագրով» շրջանում, Դուք կարող եք անդամագրվել կամ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, կամ FFS «Medi-Cal»-ին:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերին անդամագրվելուց ազատվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS, «Միակ ծրագրով» կամ ոչ-COHS շրջանում, այցելեք www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx:

17. Իսկ եթե ես American Indian կամ Alaska Native Member անդամ եմ:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկված American Indian կամ Alaska Native անդամ եք, ապա կարող եք ծառայություններ ստանալ Ձեր նախընտրած Indian Health Care Provider-ից: Եթե հարցեր ունեք Ձեր նպաստների մասին, զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիր կամ «Medi-Cal Ombudsman»-ին՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով:

18. Կարո՞ղ եմ ես բժշկական պատճառով ազատվել «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի անդամագրումից:

Եթե Դուք պաշտոնապես ճանաչված որևէ բարդ առողջական խնդիր ունեք, և «**Medi-Cal**»-ի Ձեր բժիշկը կամ կլինիկան FFS «Medi-Cal»-ի սպասարկող է, որն ընդգրկված չէ «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի ցանցում, հնարավոր է, որ Դուք կարողանաք բժշկական պատճառով ազատում ստանալ և **մինչև 12 ամիս** պահել Ձեր ներկա սպասարկողին: Եթե ազատման Ձեր հայցը բավարարվի, կարող եք մնալ FFS «Medi-Cal»-ում և պահել Ձեր բժշկին մինչև բժշկական պատճառով ազատման ժամկետի ավարտը:

Եթե ցանկանում եք FFS «Medi-Cal»-ում մնալ, հնարավորին չափ շուտ դիմեք բժշկական պատճառով ազատում ստանալու համար: Մեծ մասամբ՝ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում **90 կամ ավելի օր** գտնվելուց հետո, Դուք այլևս չեք կարող ազատվել կառավարվող բուժսպասարկման ծրագրերին անդամագրվելու պարտավորությունից: Ձեր բժիշկը, կլինիկան կամ որևէ փաստաբան կարող է օգնել Ձեզ լրացնել ձևաթուղթը: Ձևաթղթի մի մասը պիտի Ձեր բժիշկը լրացնի: Լրացված ձևաթուղթն ուղարկեք «Medi-Cal HCO»:

«**Medicare**»-ի Ձեր սպասարկողներին պահելու համար Ձեզ անհրաժեշտ **չէ** բժշկական պատճառով ազատում ստանալ:

Բժշկական պատճառով ազատում ստանալու համար դիմելու երկու եղանակ կա.

1. **Հեռախոսով՝** Զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) համարով:
2. **Առցանց՝** Այցելեք «Medi-Cal HCO»-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

Որոշակի առողջական խնդիրների դեպքում՝ եթե Դուք ցանկանում եք ավելի քան 12 ամիս պահել «Medi-Cal»-ի Ձեր սպասարկողին, հնարավոր է, որ Դուք իրավունք ունենաք բժշկական պատճառով ազատման ժամկետի երկարաձգում խնդրելու: Եթե ցանկանում եք ազատման հայց ներկայացնել, պետք է բժշկական պատճառով Ձեր ներկա ազատման սկսվելու օրվանից առնվազն **11 ամիս** սպասեք, որից հետո նոր ազատման դիմում ներկայացնեք: Երբ Ձեր ներկա ազատման ժամկետի ավարտին 45 օր մնա, «Medi-Cal HCO»-ն Ձեզ տեղյակ կպահի այդ մասին: Նրանք Ձեզ կտեղեկացնեն, թե ինչպես ժամկետի երկարաձգում խնդրել:

Եթե ազատման Ձեր դիմումը մերժվի, հնարավոր է, որ Դուք կարողանաք պահել Ձեր բժշկին, եթե «Medi-Cal Managed Care»-ի Ձեր ծրագրից «չընդհատվող բուժսպասարկում» խնդրեք:

Եթե Դուք ապրում եք COHS կամ «Միակ ծրագրով» շրջանում, չեք կարող բժշկական պատճառով ազատվել:

19. Եթե ես մինչև 2024 թ. հունվարի 1-ը բժշկական պատճառով հաստատված ազատում ունենամ, ես կմնամ FFS-ում:

Եթե բժշկական պատճառով Ձեր ազատումը հաստատվել է մինչև 2024 թ. հունվարի 1-ը, դուք կմնաք FFS-ում, մինչև բժշկական պատճառով Ձեր հաստատված ազատման ժամկետն ավարտվի, և Ձեզ համար բժշկական առումով ապահով լինի ընդգրկվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում:

Բժշկական պատճառով ազատման դիմումը (Medical Exemption Request) (MER) Ձեզ հնարավորություն է տալիս մինչև ազատման ժամկետի ավարտը մնալ «Medi-Cal» FFS-ում: Մինչև բժշկական պատճառով Ձեր ազատման ժամկետի ավարտը Դուք նամակ կստանաք:

Եթե կարծում եք, որ Ձեր առողջական վիճակը շարունակում է բավարարել ազատման պահանջները, կարող եք բժշկական պատճառով ազատման ժամկետի երկարաձգում խնդրել: Եթե ցանկանում եք ազատման հայց ներկայացնել, պետք է բժշկական պատճառով Ձեր ներկա ազատման սկսվելու օրվանից առնվազն **11 ամիս** սպասեք: Երբ բժշկական պատճառով ազատման ժամկետն ավարտվի, «Medi-Cal HCO»-ն Ձեզ տեղեկություններ կտրամադրի «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելու մասին:

20. Եթե ես մինչև 2024 թ. հունվարի 1-ը ոչ բժշկական պատճառով հաստատված ազատում ունենամ, ես կմնամ FFS-ում:

Դա կախված է այն բանից, թե որտեղ եք ապրում: Ոչ բժշկական պատճառով ազատումը Ձեզ հնարավորություն է տալիս FFS-ում մնալ ոչ-COHS և ոչ-«Միակ ծրագրով» շրջաններում:

Եթե Դուք ապրում եք COHS կամ «Միակ ծրագրով» շրջանում, ապա **չեք** կարողանա FFS-ում մնալ: Ձեր ոչ բժշկական պատճառով ազատումը կավարտվի 2023 թ. դեկտեմբերի 31-ին: 2024 թ. հունվարի 1-ին Դուք կընդգրկվեք «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող առողջապահական ծրագրում:

21. Մինչև «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկվելը ինչպե՞ս եմ ես բուժսպասարկում ստանալու:

Մինչև «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելը Դուք FFS «Medi-Cal» կունենաք: Այդ ընթացքում Դուք կարող եք պահպանել Ձեր նախնական բուժօգնության սպասարկողին (PCP) կամ այն ապասարկողին որն ընդունում է FFS «Medi-Cal»:

Նոր սպասարկող գտնելու համար ծանոթացեք FFS «Medi-Cal»-ում ընդգրկված սպասարկողների առցանց ցուցակին՝

<https://geohub-cadhcs.hub.arcgis.com> հասցեում :

- Երբ զանգահարեք սպասարկողին, հարցրեք, թե արդյոք նա ընդունում է «Medi-Cal Fee-For-Service»-ի նոր հաճախորդներ:

- Կարող եք նաև զանգահարել «Medi-Cal»-ի Օգնության հեռախոսագծին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը՝ 1-800-541-5555 հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

22. Ո՞վ է լինելու իմ բժիշկը, երբ ես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում լինեմ:

«Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելուց հետո Դուք պետք է նախնական բուժօգնության այնպիսի մի բժիշկ (PCP) ընտրեք, որն աշխատում է «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ: Եթե «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո

30 օրվա ընթացքում Դուք բժիշկ չընտրեք, «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրն ինքը բժիշկ կընտրի Ձեզ համար:

Սա չի վերաբերում այն դեպքերին, երբ Դուք «Medicare» ունեք: Եթե Դուք «Medicare» ունեք, կպահպանեք «Medicare»-ի Ձեր սպասարկողներին:

Եթե ցանկանում եք **պահպանել** Ձեր բժշկին՝

- Հարցրեք Ձեր բժշկին, թե արդյոք նա աշխատում է «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի հետ:
- «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագիր ընտրեք, որի հետ աշխատում է Ձեր բժիշկը:

Եթե ցանկանում եք **նոր** բժիշկ գտնել՝

- Ընտրեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի բժիշկների առցանց ցուցակից: Կամ խնդրեք Ձեր ծրագրին, որ բժիշկների ցուցակը փոստով ուղարկի Ձեզ:
- Խնդրեք փոխել Ձեր բժշկին և այնպիսի մի բժիշկ նշանակել, որն ընդգրկված է «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի ցանցում: Դուք կարող եք ցանկացած ժամանակ խնդրել, որ դա անեն:
- Բժիշկ գտնելու հարցում օգնություն ստանալու կամ Ձեր բժշկին փոխելու համար՝ ծրագրում ընդգրկվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժնի հեռախոսահամարով:

Եթե Դուք «**Medicare**»-ի բժիշկ ունեք՝

- Ձեր բժիշկը չի փոխվի: Պարտադիր չէ, որ «Medicare»-ի Ձեր սպասարկողները «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի մաս կազմեն, որպեսզի կարողանան սպասարկել Ձեզ:
- «Medicare»-ի Ձեր սպասարկողները՝ չեն կարող Ձեզնից համալճարումներ կամ չապահովագրված մասի վճարումներ գանձել, եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամ եք:
- Այդ ծախսերի համար «Medicare»-ի Ձեր սպասարկողները պետք է հաշիվ ներկայացնեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին, եթե անգամ նրանք «Medi-Cal»-ի ցանցում ընդգրկված չեն:

23. Կարո՞ղ եմ ես պահել «Medi-Cal»-ի իմ սպասարկողին, եթե իմ սպասարկողը չի աշխատում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ:

Եթե վերջին **12 ամիսների** ընթացքում Դուք այցելել եք «Medi-Cal»-ի մի սպասարկողի, որը չի աշխատում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ, հնարավոր է, որ Դուք կարողանաք պահել Ձեր սպասարկողին: Դրանց թվում են «Medi-Cal»-ի Ձեր բժիշկները, մասնագետներն ու թերապևտները: Թերապևտները, որոնց Դուք կարող եք պահպանել, ֆիզիոթերապևտներն են, աշխատանքային, շնչառական թերապևտները և խոսքաբույժները, ինչպես նաև վարքաբուժական ծառայություններ տրամադրողները: Եթե Դուք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրից «չընդհատվող խնամք» խնդրեք, հնարավոր է, որ կարողանաք պահպանել Ձեր սպասարկողին:

Սպասարկողը պետք է համաձայնի աշխատել «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագրի հետ: Դա կարող է մինչև 12 ամիս տևել կամ, որոշ դեպքերում, ավելի երկար: Եթե Ձեզ չընդհատվող խնամք է հարկավոր, ապա անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի անդամների սպասարկման բաժնի հեռախոսահամարով:

Եթե այն մասնագիտացված խնամքի հաստատության, որտեղ Դուք ապրում եք տվյալ պահին ընդգրկված չէ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի ցանցում, ապա Դուք առնվազն 12 ամիս ստիպված չեք լինի տեղափոխվել:

Եթե Դուք «Medicare» ունեք, կպահպանեք «Medicare»-ի Ձեր ներկա նպաստներն ու սպասարկողներին:

«Medi-Cal»-ի միջոցով տրամադրվող ծառայությունները

24. Ուրիշ ի՞նչ ծառայություններ կարող եմ ես ստանալ «Medi-Cal»-ի միջոցով:

Ատամնաբուժական ծառայություններ

«Medi-Cal»-ի միջոցով Դուք կարող եք ատամնաբուժական ծառայություններ ստանալ: Երբ Դուք անդամագրվում եք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի, Ձեր ատամնաբուժական նպաստները չեն փոխվում:

- Շրջանների մեծ մասում Դուք Fee-for-Service (Սովորական) «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայություններ եք ստանում **«Medi-Cal Dental» ծրագրի** միջոցով: Դուք պետք է դիմեք «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայությունների հետ համագործակցող ատամնաբուժական ծառայություններ մատուցողին: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար զանգահարեք «Medi-Cal Dental»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով: Զանգն անվճար է:

Դուք ատամնաբուժական սպասարկող և «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել նաև «Smile, California» կայքում՝ **www.smilecalifornia.org** հասցեով:

- Եթե Դուք ապրում եք **Los Angeles-ի շրջանում**, կարող եք ծառայությունները ստանալ «**Medi-Cal Dental**» **ծրագրի** միջոցով՝ Fee-For-Service ատամնաբուժական ծրագրով կամ «**Medi-Cal Dental Managed Care**»-ի **որևէ ծրագրով**: «**Medi-Cal Dental Managed Care**»-ի ծրագրերին անդամագրվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal HCO»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:
- Եթե Դուք ապրում եք **San Mateo-ի շրջանում**, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք «Health Plan of San Mateo»-ի (HPSM) կամ FFS-ի միջոցով:
 - Եթե Դուք ընդգրկված եք HPSM-ում, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք HPSM-ի միջոցով: HPSM-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-750-4776 (TTY՝ 1-800-735-2929) հեռախոսահամարով:
 - Եթե Դուք «Kaiser»-ի անդամ եք, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք ատամնաբուժական FFS-ի միջոցով: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար կարող եք զանգահարել ատամնաբուժական «Medi-Cal»-ի հաճախորդների սպասարկման կենտրոնը՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը

Հոգեկան առողջության ծառայություններ

Եթե Ձեզ հոգեկան առողջության ծառայություններ են անհրաժեշտ, խոսեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժնի աշխատակիցների հետ: Կամ խոսեք Ձեր PCP-ի կամ շրջանի հոգեկան առողջության ծրագրի հետ: Դուք կարող եք հոգեկան առողջության ծառայություններ ստանալ «Medicare»-ի կամ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցի միջոցով: Հնարավոր է նաև, որ Դուք իրավունակ լինեք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ ստանալու համար՝ Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագրի կողմից:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը և Ձեր շրջանի հոգեկան առողջության ծրագիրը **պետք է** օգնեն Ձեզ Ձեր հոգեկան առողջության խնդիրների հարցում: Նրանք պետք է օգնեն Ձեզ անհրաժեշտ

սպասարկողին գտնել: Շրջանի հոգեկան առողջության ծրագրի կոնտակտային տվյալների համար այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx**:

Անկախ այն բանից, թե որին կդիմեք, Դուք պետք է անմիջապես ծառայություններ ստանաք: Օգնություն ստանալու համար ախտորոշում անհրաժեշտ չէ:

Ալկոհոլի և թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման ծառայությունները

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր ալկոհոլի և այլ թմրանյութերի հետ կապված խանգարումների (SUD) բուժման ծառայություններ ստանալու հարցում, «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է գնահատում կատարել: SUD-ի բուժման ծառայությունների համար կարող եք նաև զանգահարել Ձեր շրջանի թմրադեղերի «Medi-Cal» ծրագիր: Ձեր շրջանում SUD-ի բուժման կոնտակտային տվյալների համար այցելեք **www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx**: Կամ զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին և օգնություն ստացեք SUD-ի բուժում ստանալու հարցում:

Դեղատան ծառայություններ

Քանի որ Դուք ապրում եք Միջանկյալ խնամքի կացարանում կամ մասնագիտացված խնամքի հաստատության, Դուք Ձեր դեղատոմսային դեղերն այնտեղ եք ստանում: Սա **չի** փոխվի, երբ Դուք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անդամ լինեք:

«Medi-Cal Rx»-ը վճարում է այն դեղատոմսային դեղերի համար, որոնք Ձեր սպասարկողը նշանակում է Ձեզ, որպեսզի Դուք դրանք վերցնեք դեղատնից: «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը վճարում է այն դեղերի համար, որոնք Ձեր սպասարկողն անձամբ տալիս է Ձեզ, ասենք՝ բժշկի մոտ գտնված ժամանակ կամ կլինիկայում:

«Medi-Cal Rx»-ի դեղատոմսային դեղերի ապահովագրության և «Medi-Cal» ընդունող դեղատների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.medi-calrx.dhcs.ca.gov**: Կամ զանգահարեք «Medi-Cal Rx»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-977-2273 (TTY՝ State Relay 711) հեռախոսահամարով: Զանգահարելիս պատրաստ ունեցեք «Medi-Cal»-ի Ձեր նպաստների նույնականացման քարտի (Benefits Identification Card) (BIC) համարը:

Եթե «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո Դուք հարցեր ունենաք, զանգահարեք Ձեր ծրագրի անդամների սպասարկման բաժնի համարով:

Եթե Դուք «Medicare»-ի իրավունակություն ունեք, ապա «Medicare Part D»-ն կվճարի դեղերի մեծ մասի համար: Դուք պետք է վճարեք սահմանված համավճարումները: «Medi-Cal»-ը կվճարի միայն «Part D» ծրագրում չընդգրկված դեղամիջոցների համար:

**Առողջապահական նպատակներով կատարվող փոխադրումները
Միջանկյալ խնամքի հաստատությունից կամ Մասնագիտացված
խնամքի հաստատությունից դուրս**

Եթե Դուք բժշկին, կլինիկա, ատամնաբույժին, հոգեկան առողջության և ոգելից խմիչքների կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման վայր այցելելու, Ձեր դեղերը վերցնելու կամ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող որևէ այլ ծառայության տրամադրման վայր ներկայանալու հնարավորություն չունեք, ապա Դուք կարող եք իրավունակ լինել անվճար փոխադրման ծառայություններ ստանալու համար: Այդ ծառայությունները, որոնք կոչվում են «Non-Medical Transportation» (NMT), Դուք կարող եք ստանալ ավտոմեքենայով, տաքսիով, ավտոբուսով կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցով: NMT-ն տրամադրվում է «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող, ինչպես նաև «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող բայց ոչ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջոցով տրամադրվող ժամադրություններին, օրինակ՝ ալկոհոլի կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման ծառայություններ ստանալու նպատակով կատարվող այցելություններին ներկայանալու համար:

Եթե առողջական վիճակի պատճառով Դուք չեք կարող օգտվել ավտոմեքենայից, ավտոբուսից, տաքսուց կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցից, ապա կարող եք «Non-Emergency Medical Transportation»-ի (NEMT) ծառայություններ ստանալ և Ձեր ժամադրությանը ներկայանալ շտապ օգնության մեքենայով, պառկած կամ անվասայլակով անձանց համար հարմարեցված միկրոավտոբուսով: NEMT պատվիրելու համար Դուք պետք է որևէ հավաստագրված սպասարկողի կողմից տրված կարգադրագիր ունենաք: NEMT-ն այն անձանց համար է, որոնք չեն կարող օգտվել հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցներից: Նման կարգադրագիր կարող է տալ Ձեր նախնական բուժօգնության սպասարկողը, ատամնաբույժը, ոտքի բժիշկը, ինչպես նաև հոգեկան առողջության կամ կախվածության հետ կապված խանգարումը բուժող սպասարկողը:

«Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցի տրամադրման ժամերի հարցում: Փոխադրման ծառայություն պատվիրելու համար զանգահարեք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Ձեզ փոխադրում է անհրաժեշտ լինելու, Դուք պետք է ժամադրությունից առաջ որքան հնարավոր է շուտ կապվեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ: Եթե դուք բազմաթիվ ժամադրություններ ունեք, կարող եք նաև փոխադրում պատվիրել այդ ժամադրություններին ներկայանալու համար:

25. Որտեղից կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:

Եթե հարցը վերաբերում է «Medi-Cal»-ին և թե ինչ ծառայություններ կարող եք ստանալ «Medi-Cal»-ի միջոցով՝	• Զանգահարեք DHCS-ի «Medi-Cal»-ի օգնության հեռախոսագծին՝ 1-800-541-5555 համարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը: Զանգն անվճար է: Կամ այցելեք DHCS-ի կայքը՝ www.dhcs.ca.gov հասցեով:
Եթե հարցեր ունեք այն մասին, թե ինչու են «Medi-Cal»-ի Ձեզ տրամադրվող ծառայությունները փոփոխվում՝	• Զանգահարեք DHCS Ombudsman-ի գրասենյակ՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից երեկոյան ժամը 5-ը՝ 1-888-452-8609 (TTY՝ California State Relay՝ 711) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ հաղորդագրություն ուղարկեք էլփոստով՝ MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov հասցեին: Նա օգնում է «Medi-Cal» ունեցող անձանց օգտվել իրենց նպաստներից և իմանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները: • Զանգահարեք «Medicare Medi-Cal Ombudsman Program»՝ 1-855-501-3077 համարով: Զանգն անվճար է: Գանգատների և խնդիրների դեպքում՝ նա օգնում է «Medicare» և «Medi-Cal» ունեցող անձանց: • Զանգահարեք Long-Term Care Ombudsman-ին՝ 1-800-231-4024 հեռախոսահամարով: Հեռախոսագիծը բաց է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Նա օգնում է Մասնագիտացված խնամքի հաստատությունում, Միջանկյալ խնամքի հաստատությունում կամ Ենթասուր խնամքի հաստատությունում բնակվող անձանց, եթե նրանք գանգատներ ունեն, և բացատրում է վերջիններիս իրենց իրավունքներն ու պարտականությունները: • Զանգահարեք «Health Consumer Alliance»՝ 1-888-804-3536 հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ անցեք https://healthconsumer.org հղումով:

Առողջապահական ծրագրերի և սպասարկողների (բժիշկների, կլինիկաների)՝ Ձեզ հասանելի տարբերակների մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝	• Զանգահարեք «Medi-Cal Health Care Options»՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ անցեք www.healthcareoptions.dhcs.ca.gov հղումով:
Ձեր տեղական Շրջանային կենտրոնը գտնելու համար՝	• Այցելեք Զարգացման ծառայությունների դեպարտամենտի կայքը՝ https://www.dds. ca.gov/rc/lookup-rcs-by-county հասցեով: Կամ զանգահարեք նրանց՝ 1-833-421-0061 համարով: Զանգն անվճար է: